ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ 2013-2014ԹԹ. ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014թթ. համալիր միջոցառումների ծրագիրը մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրի հետ համատեղ հաստատությունում կոռուպցիոն երևույթների դեմ արդյունավետ պայքար կազմակերպելու հիմնական ուղենիշն է, քանի որ դրանում արտացոլված են կոռուպցիոն դրսևորումների դեմ նպատակային պայքարի հիմնական միջոցառումները և դրանց իրականացման ակնկալվող արդյունքները:

Մասնաճյուղում ռազմավարական նպատակներով և ընթացիկ գործառույթների շարքում նախատեսված է առանձին և կարևոր խնդիր՝ նվազեցնել կոռուպցիոն հնարավոր ռիսկերը, նպաստել մասնաճյուղում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի հետագա զարգացմանը և ամրապնդմանը:

Նշված ծրագրի մշակման և համապատասխան համալիր միջոցառումների իրականացման աշխատանքները համակարգվում է մասնաճյուղի տնօրենի 18.03.2013թ. Թիվ 3 հրամանով ստեղծված հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողովի կողմից, որը ղեկավարում է մասնաճյուղի տնօրենը /հանձաժողովի նախագահ/, իսկ հանձնաժողովի կազմում ընդգրկված են Ուսումնամեթոդական վարչության պետը, ԱԿ բաժնի վարիչը, Արհբյուրոյի նախագահը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանը և Ուսխորհրդի նախագահը:

Վերոհիշյալ ծրագրով սահմանված է մասնաճյուղում առկա կոռուպցիոն ռիսկերը, այդ թվում գիտելիքի գնահատում, մուտք դեպի կրթական համակարգ, ուսանողի շարժունակություն, անձնակազմի և ֆանանսական կառավարում և այլն:

Մասնաճյուղի տնօրենի կողմից յուրաքանչյուր տարի ներկայացվող համապատասխան տարվա աշխատանքային գործունեության մասին զեկուցում որպես առանձին աշխատանքային ուղղություն 2010-2011 ուսումնական տարվանից ներկայացվում է հակակոռուպցիոն միջոցառումների կատարողականը:

Կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի արդյունավետությունը կախված է մասնաճյուղի յուրաքանչյուր աշխատակցի և ուսանողի ակտիվ մասնակցությունից, որի վերաբերյալ ներկայացնում ենք կատարված աշխատանքների նկարագրությունը՝ ըստ առանձին ուղղությունների:

<u>Գիտելիքների գնահատում, ուսումնական գործընթացի վերահսկում, փոխատեղում և տեղափոխություններ</u>

Ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացում հնարավոր կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով մասնաճյուղի Ուսումնամեթոդական վարչությունը իր գործունեությունը իրականացրել է՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության, ԿԳ նախարարության, ԵՊՀ և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կողմից սահմանված կանոնակարգերին ու պահանջներին համապատասխան: Հաշվետու տարվա ընթացքում, հատկապես քննաշրջաններին նախորդող ժամանակահատվածում, դասախոսների և ուսանողների շրջանում բացատրական աշխատանքներ են տարվել քննությունների անցկացման ընթացակարգերի և իրենց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ: Յուրաքանչյուր քննաշրջանից հետո ֆակուլտետներում ստուգվել է քննական տեղեկագրերում ամրագրված գնահատականների և գրավոր աշխատանքների՝ տետրերի գնահատականների համապատասխանությունը, ինչպես ուսանողների կողմից դասերին մասնակցության միավորի համապատասխանությունը: Ըստ ուսումնասիրությունների քննական բոլոր տոմսերը պարտադիր կարգով ստորագրվել են ամբիոնների վարիչների կողմից:

Կիսամյակի ընթացքում կատարվել են դասամատյանների ստուգումներ /լրացումներ, պարզելու բացակայությունների նշումների առկայությունը, դասախոսի ստորագրությունը և այլն/: Հաշվետու տարում ստուգվել են նաև դասերի կայացման ընթացքը, դասախոսների և ուսանողների բացակայությունները, որի արդյունքում դասախոսների կողմից արձանագրված անհարգելի բացակայողների ցուցակը ներկայացվել են հաշվապահությանը՝ համապատասխան պահումներ կատարելու համար:

Մասնաճյուղում մշակվել է «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողների գիտելիքների գնահատման բողոքարկման ընթացակարգը»:

Քարոզչական և նախազգուշական աշխատանքների իրականացում, տեղեկացվածության մակարդակի բարձրացում

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի աշխատակիցների և ուսանողների շրջանում կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողական մթնոլորտ ձևավորելու նպատակով համաձայն աշխատանքային պլանի իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են եղել վերացնելու առկա մի շարք խնդիրների հանդեպ անտարբերությունը և խթանելու դասախոսների ու ուսանողների ակտիվությունը հակակոռուպցիոն պայքարում:

Ուսանողների հետ մասնաճյուղի տնօրենի և դեկանների հանդիպումների ժամանակ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել կոռուպցիոն երևույթների նկատմամբ նրանց մոտ անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանը:

Միաժամանակ այդ կապակցությամբ կազմակերպված հանդիպումների ժամանակ ուսանողների կողմից արված առաջարկությունները և կարծիքները վերցվել են հսկողության տակ՝ դրանց պարզաբանման և ընթացք տալու համար:

Վերջին տարիներին մասնաճյուղում ներդրվել են ուսումնական խորհրդատուների /կուրատորների/ ինստիտուտի համակարգը, որի նպատակն է օգնել և աջակցել ուսանողներին՝ լուծելու ուսումնառության ընթացքում ծագող տարբեր խնդիրներ:

Քննաշրջանից հետո արդյունքերը փակցվել են ֆակուլտետներում և ամփոփիչ քննությունների արդյունքները քննություններից հետո սահմանված ժամկետում տեղադրվել է մասնաճյուղի կայքում:

Անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների թեկնածությունները քննարկվել են ֆակուլտետներում, որին ակտիվ մասնակցություն են ունեցել ֆակուլտետների ուսանողական կառույցների ներկայացուցիչները:

Հակակոռուպցիոն աշխատանքներում մեծ նշանակություն է տրվել երկկողմ պատշաճ շփումների մշակույթի արմատավորմանը: Այդ նպատակով գրեթե բոլոր դասախոսներին և ուսանողներին տրամադրվել է մասնաճյուղի էլեկտրոնային փոստի հասցեն:

Մասնաճյուղում լավ հնարավորություն է ընձեռնվել ընդլայնելու կայքի օգտագործումը ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման համար, որի շրջանակներում դասընթացների ծրագրերը և հարցաշարերը մեծամասամբ տեղադրվել են մասնաճյուղի և հեռակա ուսուցման բաժնի կայքերում:

Արդյունավետ և հետևողական աշխատանքներ են տարվել հանրային կապերի և մասնաճյուղին վերաբերվող տեղեկատվության մատչելիության և թափանցիկության ապահովման ուղղությամբ;

<u>Ուսանողական հարցումներ</u>

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում յուրաքանչյուր կիսամյակ իրականացվել են դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներ, ինչպես նաև մասնաճյուղում ուսումնառության վերաբերյալ շրջանավարտների հարցումներ, որոնց արդյունքները քննարկվել են գիտական խորհրդում և տնօրենության նիստերում:

Ուսանողական հարցումների պրակտիկան շարունակվելու է և նրանց արդյունքները պարբերաբար քննարկվելու են: Կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ տեղեկություններ ստանալու դեպքում անմիջապես ձեռնարկվելու են համապատասխան միջոցառումներ դրանց վերաբերյալ տեղեկությունները հիմնավորելու կամ հերքելու ուղղությամբ, իսկ այնուհետև ստուգման նյութերին ըստ էության տրվել են օրինական ընթացք:

<u>Ներքին իրավական ակտեր</u>

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում պարբերաբար իրականացվել են ներքին իրավական ակտերի կիրառման գործընթացում ծագող խնդիրների մոնիթորինգ, որի արդյունքում հայտանաբերված թերություններն ու բացթողումներն անմիջապես վերացվել են, իսկ երկիմաստ և անհստակ կանոնակարգումներ պարունակող դրույթները՝ փոխվել:

Ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ մասնաճյուղի ներքին իրավական ակտերի վերանայման և բարելավման ուղղությամբ, որի արդյունքում ամբողջությամբ փոխվել են մասնաճյուղի կանոնադրությունը և կանոնները, որոնք համապատասխանեցվել են մասնաճյուղի արդի գործառույթներին ու խնդիրներին, ինչպես նաև հաստատության ներքին կարգապահության արդի պահանջներին:

<u>Ուսանողական կազմակերպություններ, աշխատանք ուսանողներ հետ</u>

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողների հետ կազմակերպվել են «Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների բացասական ազդեցությունը և հետևանքները» թեմայով սեմինար քննարկումներ: Ուսանողական կառույցների աշխատանքները արդյունավետ կազմակերպելու հարցերով նրանց ցուցաբերվել է օգնություն և աջակցություն:

Մասնաճյուղի ուսանողական կազմակերպությունների կողմից իրականացված միջոցառումներին մասնակցել են նաև պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի ներկայացուցիչներ: Ֆակուլտետներում կազմակերպվել են դասախոս-ուսանող երկխոսություն, խորհրդակցություններ, բարոյահոգեբանական և բարոյագիտական թեմաներով զրույց-զեկուցումներ, էքսկուրսիաներ և այլն, որոնք միտված են եղել ուսանողների և դասախոսների մինչսերնդային երկխոսությունը:

Մասնաճյուղի տնօրենի կողմից յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ կազմակերպվում է հանդիպումներ մասնաճյուղի ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության անդամների, կուրսերի ավագների և առանձին ուսանողների հետ, որի ժամանակ քննարկվում են ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների իրավունքների պահպանման վերաբերյալ հարցեր:

<u>Անձնակազմի կառավարում և գնումների գործընթացը</u>

Մասնաճյուղում իրականացվել են պաշտոնների տեղակալման կանոնակարգերով նախատեսված համապատասխան մրցույթներ, որոնց նպատակը եղել է դրանցում սուբյեկտիվ գործոնների ազդեցության նվազեցման և մրցակցային գործընթացների խրախուսման աշխատանքների կատարմանը: Հաշվետու ժամանակաընթացքում աշխատանքներ են իրականացրել մասնաճյուղի վարչական և օժանդակ պաշտոնների համակարգի սահմանման և դասակարգման կարգի մշակման, ինչպես նաև այդ պաշտոնները զբաղեցնող անձանց ատեստացիայի անցկացման կարգի մշակման ուղղությամբ:

Հաստատությունում հստակեցվել են գործող օրենսդրությամբ սահմանված գնումների գործընթացին առնչվող նորմերին, մասնաճյուղում գնումների իրականացման ընթացակարգի և այդ համատեքստում գործող ստորաբաժանման կողմից տրված պարտականությունների ճիշտ և ժամանակին կատարման պահանջները:

Մասնաճյուղի գիտական խորհրդի քննարկմանը պարբերաբար ներկայացվում է ֆինանսական կառավարման վերաբերյալ ամենամյա եկամուտների և ծախսերի նախահաշիվն ու նախորդ տարիների կատարման հաշվետվությունը: